ՆՈՐ-ԴԱՐ

№ 89 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 7 Յունիսի 1888 Երեքշաբթի 7 Յունիսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 89

Տարեկան 10 րուբլի, վեց ամսոք՝ 6 րուբլի, երեք ամսոք՝ 3 ր. 50 կ., ամսոք՝ 1 ր. 50 կ., հատուկ՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի սուն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լրագրերով։ Յայտարարութիւնների բաժին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

«Նոր-Դար»-ին յունիսի 1-ից բաժանորդ են գրվում և վճարում են 6 ր. 50 կ.։ Բաժանորդ գրուել ցանկացողները ուղարկում են բաժանորդագինը այս հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію газеты «Норъ-Даръ»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Խորհրդածութիւններ։
Քրոնիկոն.—Լուրեր։ Դէպից-դիպուած։
Թղթակցութիւններ.—Շուշի։
Քաղաքական.— Գերմ անհայր Ֆրէդրիխ III կայսրը։ Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 6 յունիսի 1888

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Կան բառեր, որոնք իրենց մէջ պարունակող բուն իմաստից դուրս ոչինչ նշանակութիւն չունին, ինչ ժամանակում, ինչ հանգամանքում կամ որտեղ էլ որ նրանց գործածում լինէին. նրանք չեն կարող մի առանձին, բուն բառը մեկնող մտքից դուրս մի ուրիշ բան հասկացնել։ Բայց կան և բառեր, որոնք որոշ տեղում, որոշ հանգամանքում և ժամանակում գործածուելով՝ բացի բառական, և բառի մէջ պարունակող մտքից առանձին, ընդհանուր նշանակութիւն են ստանում, առանձին նպատակ են յայտնում իւր ծանր հետևանքներով։ Այսպէս, ոչ թէ օտարները միայն, այլ և իրենք հայերը, նոյն իսկ մեր հոգևորականները մեր եկեղեցուն սովորութիւն են շինել անուանելու Լուսաւորչական, Գրիգորեան եկեղեցի և այդ եկեղեցին դաւանող հային՝ Լուսաւորչական, Գրիգորեան հայ։

Քրիստոնէական վարդապետութիւնը Հայաստան աշխարհը մըտցընող նախահայրերի մէջ անշուշտ մեծ տեղ ունի ս. Գրիգորը, որ Լուսաւորիչ անունն է ստացել ազգից։ Հետևաբար լուսաւորչական ասելով պէտք է հասկանանք Լուսաւորչին հետևող, իսկ որովհետև Լուսաւորիչը Գրիգորն է եղել, ուրեմն սրա քարոզած վարդապետութեան հետևող հայը կարող է կոչուել և Գրիգորեան։

Գրիգոր Լուսաւորիչն այնքան մեծ դեր է կատարել Հայաստան աշխարհում, քրիստոնէական վարդապետութիւնը մտցնելու ժամանակ, այնքան նա պաշտելի է եղել և է հայ ազգի համար, որ նրա անունը յաւերժացնելու, նրա սիրոյն համար հայը կարող էր իրեն և՛ Լուսաւորչական և՛ Գրիգորեան անուանել։

Բայց որ Գրիգոր Լուսաւորիչը չէ մեր եկեղեցին հիմնողը, այդ գիտենք պատմութիւնից, գիտենք և այն, որ մեր եկեղեցին չէ կոչուել և կարող չէ կոչուել Գրիգորեան եկեղեցի, այլ կոչվում է Հայաստանեայց առաքելական ս. Եկեղեցի։

Պատմութիւնից գիտենք, որ Հայաստան աշխարհում քրիստոնէական վարդապետութիւնն առաջին անգամ քարոզողները և այդ վարդապետութիւնների համար նահատակուողները եղել են Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալները։ Գրիգոր Լուսաւորիչը այդ վարդապետութիւնը քարոզելով աւելի տարածել, աւելի ընդհանրացրել է Հայաստանում։ Այնուհետև ս. Մեսրովբի հայերէն տառերի գիւտը, և ս. գրոց հայերէն թարգմանութիւնը, դրել են Քրիստոսի վարդապետութիւնը, այսպէս ասած՝ ժողովրդական, ազգային հողի վրայ։ Մեր եկեղեցու նախահայրերը, Հայաստան երկրի առանձնութիւնները, ազգի հանճարը քրիստոնէական վարդապետութիւնից ստեղծել, կազմել և կազմակերպել են մի առանձին, մի ուրոյն եկեղեցի, որ ըստ ամենայնի կապուած է եղել երկրի և այդ երկրում բնակուող հայ ժողովրդի սրտի, հոգու և մտքի հետ։ Ահա ինչու այդ եկեղեցին հակառակ միւս քրիստոնեայ եկեղեցիների—կոչուել է և կոչվում է Հայաստանեայց եկեղեցի։ Նա մի մարդու, որքան էլ այդ մարդը մեծ և սուրբ լինէր, ստեղծագործութիւնը չէ, մէկ անձնաւորութեան, մէկ ազգի հետ կապուած չէ և դրա համար իսկ ամենաազգային եկեղեցին է նա և միւս բոլոր եկեղեցիներից աւելի կապուած է որոշ երկրի և որոշ ազգութեան հետ. դրա մէջ է հենց նրա մեծ խորհուրդը։

Սրդ, եթէ այսօր գտնվում են հայեր, որոնք տգիտութիւնից կամ գիտութեամբ մեր ազգի և եկեղեցու հազարաւոր տարիների անցեալը գլխի վրայ դնելով Հայաստանեայց եկեղեցին դաւանող հային՝ հայ լուսաւորչական կամ հայ գրիգորեան են անուանում, դրանք կամայ թէ ակամայ ծառայում են այն քաղաքականութեան, որի նպատակն է Հայաստանեայց եկեղեցուց խլել նրա ազգայնութիւնը։ Այդ նպատակին են ձգտում բոլոր եղուխտ—հատատուրսները, որոնք աշխատում են նախ հայի աչքում ազգային եկեղեցին այն աստիճանի վրայ դնել, ինչ աստիճանի վրայ դրուած է հայի համար մի որ և է օտարամուտ աղանդ, նենգութեամբ յուսալով, որ մի անգամ հայոց եկեղեցին զրկուելով իւր ազգային նշանակութիւնից, այնուհետև նրա անկումը դիւրին պիտի լինի...

Յարգում ենք իւրաքանչիւր անհատի կրօնական համոզմունքները, բայց իւրաքանչիւր կրթուած և լուսամիտ հայ, ո՛ր դաւանութեան կուզէ պատկանում լինի նա, մեզ հետ կը համաձայնուի, որ հայ ազգի ազգային եկեղեցին այն է, որ Հայաստան աշխարհումն է ստեղծուել և կազմակերպուել, հայի ազգային եկեղեցին այն է, որ հազար տարիներ շարունակ ազգը նրա համար զոհուել և նահատակուել է և իւր մայրենի լեզուով աղօթել և պաշտել է, որ հայի ազգային եկեղեցին այն է, որի իդեալները Հայաստանումն են ամփոփուած և ոչ թէ Հայաստանից դուրս՝ օտար, հեռու, անծանօթ աշխարհներում։

Եթէ մենք ասում ենք հայ-լուսաւորչական կամ հայ-գրիգորեան և այդպէս շարունակելով ասում ենք այնուհետև հայ-լուտերական, հայ-մալական կամ հայ-պրիգունն... նշանակում է, որ մենք ենք մեր ձեռքով մեր ազգային եկեղեցին և նրա նշանակութիւնը ստորացնում և անուղղակի հակացնում, որ մեզ համար միևնոյնն է թէ եկեղեցին ազգային է թէ պրիգունեան է։ Այդպէս վարուելով մենք, տգիտութիւնից կամ գիտութեամբ, աջակցում ենք նրանց գործին, որոնց վերջնական նպատակն է կործանել մեր եկեղեցին, դրա հետ և մեր ազգի գոյութեան գրավական լենարանը։

Դրա համար է, որ «Նոր-Դար»-ը միշտ մեր եկեղեցուն հայոց եկեղեցի, Հայաստանեայց եկեղեցի, ազգային եկեղեցի է անուանում և սովորաբար չէ գործածում լուսաւորչական եկեղեցի, իսկ այդ եկեղեցի դաւանող հային անուանում է՝ հայադաւան։

Մեր այս խորհրդածութիւններից ընթերցողի համար պարզ է, թէ լուսաւորչական, գրիգորեան բառերը որտեղ գործածուած ինչ նշանակութիւն են ստանում և աւելացնենք, ինչ հակազգային նպատակի են ծառայում։

Ցաւալի է, որ մեր հոգևորականներից շատերը, շատ շատերը իրենք են այդ տեսակ հակազգային նպատակներին ծառայում՝ բանից ոչինչ տեղեկութիւն չունենալով։

Ի հարկէ նրանք, որոնք մեր ազգի վերաբերութեամբ կրօնին անգամ նշանակութիւն չեն տալիս, չեն կարող բառերի գործածութեան վրայ առանձին ուշադրութիւն դարձնել, բայց հաստատ և զարգացած մարդիկ գիտեն, որ աւելի, ըստ ինքեան շատ չընչին բաներ կան, որոնց վրայ պէտք է ուշադրութիւն դարձնել, որովհետև այդ չնչին համարած բաները միասին առած շատ անգամ աւելի լաւ են պահպանում մի ժողովրդի ազգային ինքնորոշութիւնը քան բազմահատոր օրէնքները։ Այդ գիտեն զօրաւոր ազգերը, որոնք դրօշակի այս կամ այն գոյնին անգամ մեծ նշանակութիւն են տալիս և չեն ղեկավարվում խակ մտքերով։

ՔՐՈՆԻԿՈՆ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.—Լսեցինք, որ Թեմական Վալտնոցի «Հոգաբարձութիւնը ժողովում մի անգամ առաջարկել է փոխ-տեսչին, որ նա հրաժարական տայ իւր պաշտօնից, որովհետև թէ հոգևոր բարձր իշխանութիւնն երբեն չէ հաստատում և թէ վալտնոցի մէջ բարեփոխութիւնները պէտք է անել։ Սակայն առ այժմ ամեն ինչ լռելեայն է լինում։

—Աբհեստագիտական դպրոցի գործերն քննելու համար նշանակուած 3 անձից բաղկացած յանձնաժողովն էլ իւր ձեռքն ունեցած բոլոր թղթերն ու տեղեկութիւնները, «մի տարի» տակը դրած պահում է և չէ ներկայացնում քաղ. խորհրդին։

Այդ բարձի թողն ձգած գործի պատճառը «խնամքական» և «ազգակցական» խնդիրները և աղաչանքներ են, որոնց չանքն է, որ մի քանի ժամանակ էլ գործը մնայ անկատար։

—

Հինգշաբթի, յունիսի 2-ին, Համբարձման օրը Ալէքսանդրեան այգում գթասանք կար ալէքգրայով Ս. Նունէի ուսումնարանի օգտին։ Ինչ ասել կուզէ, որ նպատակը բարեգործութիւն է և անշուշտ յաճախողներ էլ կը լինէին՝ մանաւանդ որ կանխօրէն բաւականին տոմսակները բաժանուած էին։ Եղանակը լաւ էր. ուստի պէտք է ենթադրել, որ եկամուտն էլ աջող կը լինէր, մանաւանդ որ օրը տօն էր։

—

Քաղաքի մէջ միակն Ալէքսանդրեան այգին է, ուր ժողովուրդը կարող է առաւօտներն և ճաշերից յետոյ մի փոքր ազատ շունչ քաշել և համեմատաբար աւելի մաքուր օդ ծծել, ուստի պէտք էր կարծել, որ առանձին ուշադրութիւն կը դարձնէին այգու պահպանութեան վրայ՝ խնամելով նրա թէ ծառերն և թէ կանաչ արօտը։ Բայց ա՛լ է ուշադրութիւն դարձնում դրանց վրայ. ծառերը վնասուած են, արօտները ոտնատակ տուած, չորացրած։ Միայն այգու մի ամենափոքր կտորն է, որ ճաղերով պատած լինելով, կանաչն էլ պահպանուել է, որովհետև այն էլ այս տարի ցանեցին, ինչի չկան մարդիկ, որոնք հսկէին և չթոյլ տային մանկաւալ, նստել, պառկել կանաչ խոտի վրայ՝ քանի որ կան նստարանները և կանոնաւոր ուղիները։

—

ՇՈՒԱՎԷՐԻՑ.—Յունիսի մէկից սկսուելու են տեղս երկսեռ ուսումնարանների հարցաքննութիւնները։ Ասում են, որ քննութիւնները վերջանալուց յետոյ, օրիորդական ուսումնարանում աշակերտուհիների գործած ձեռագործների վիճակախաղ պիտի լինի։ Խորհուրդ կը տանք, որ այս անգամ առաջուանից կանոնաւոր կատարեն վիճակախաղը, որպէս զի ժողովուրդը աւելի գթասէր։ Ցաւէք է խնայել, եթէ հարկաւոր լինի, մի փոքր ծախս իսկ անել։

—

ԽՈՆԱՇԻՆԱԿԻՑ.—Այս տարի առհասարակ եղանակները շատ լաւ են անցնում։ Արտերն և այգիները լաւ են, միայն եթէ յունիսին էլ պատուհասներից ազատ մնայ։ Բայց ամեն տարի գարնան մի քանի ջերմ գիշերներին խեղճ գիւղացիների քրտինքով ցանած արտերը հարևան Թուրքաբնակ խոջաւանդը փչացնում է։ Այս տարի նոյնպէս արանից գալով և ամբողջ երեք շաբաթ մնալով մեզ մօտ, արտերը բոլորովին և պահպանած խոտերն մեծ մասը փչացրին։ Այս մասին մի քանի հոգի գնացին պ. ոստիկանի մօտ և յայտնեցին բոլոր եղելութիւնը՝ յուսալով, որ օգնութիւն կանէ ոստիկանը. վերջինս հրամայում է հարևան Թուրքաբնակ վեքսալլուի տանուտէրին, որ տուած վնասները քննէ և վնասի չափը նշանակելով տայ հայ գիւղացիներին, որպէս զի նրանք տանեն ներկայացնեն տեղական դատաւորին։ Արդէն վնասները գրուած և տուած է դատաւորին. տեսնենք վերջը ինչ կը դառնայ։

—

Մեզ խնդրում են հրատարակել հետևեալը.—«Աչքի առաջ ունենալով հասարակութեան ջերմ ցանկութիւնը՝ մատենագիր Րաֆֆիի գերեզմանի վրայ կառուցանել պատշաճաւոր մահարձան, հանգուցեալի հետեւեալ բարեկամները՝ Ստեփան Զէլինսկի, Գաբրիէլ Սերգուեան, Շիրվանզադէ, ինժենէր Գրիգոր Կիրակոսեան, ինժենէր Աղէքսանդր Եսայեան և նկարիչ Բաշինջաղեան յանձն առան իրագործել յիշեալ նպատակը։

Յայտնելով այս մասին, խումբս «Նոր-Դար»-ի միջոցաւ վստահանում է դիմել Րաֆֆիի յիշատակը յարգողներին, խնդրելով իրենց նուէրները ուղարկել կամ Թիֆլիսի հայ լրագիրների խմբագրութեանց միջոցաւ, կամ անմիջապէս խմբի կողմից ընտրուած գանձապահին, հետևեալ հասցէով.

Въ Тифлисъ, Габріэлю Зурабовичу Мирзоеву, Сололаки, Садовая № 42.

—

ՊԵՏԻԳՕՐՍԿԻՑ.—Կիւրակի, մայիսի 29-ին տեղս Սուրբ Սահակայ և Մեսրովբայ եկեղեցումը, հայ և օտար հասարակութեան ներկայութեամբ կատարուեց հոգեհանգիստ հանգուցեալ Յակովբ Մէլիք Յակովբեանի յիշատակին—Սուրբ պատարագից յետոյ Տէր-Աբրահամ քահանայ Շիլինեանը ծանօթացրեց հասարակութեան հանգուցեալմատենագրի կենսագրութեան, նրա երկերի և հեղինակութիւնների հետ. խօսեց նրա գրուածների արժա-

ՎԵՐՆԱԳԻՐ

Այս թիվը մտնում է Հայկ. Տարեգրության 2-րդ պրակը։ Նրանում տրված են Հայաստանի և մասնավորապես Էջմիածնի վերաբերյալ շատ հետաքրքրական տեղեկություններ։ Ներկայ տարում Տարեգրությունը հրատարակվում է նոր ձևով։ Մինչև այժմ նա տպագրվում էր ամեն տարվա համար առանձին գրքույկով, որ ունենում էր 6 տպագիր մամուլ։ Այժմ նա տպագրվում է ամսագրի ձևով, որ ունենում է 6 տպագիր մամուլ։ Ամսագրի ձևով տպագրվելու պատճառով Տարեգրությունը ավելի կանոնավոր կերպով կհրատարակվի, քան մինչև այժմ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ի ՊԱՏԻՎ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ի ՀԱՆԳԱՄԱՆՔ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

սական և գերմանական գահը։

ԲԵՐԼԻՆ.—Համաձայն հանգուցեալ կայսրի վերջի կամքին, թաղումը կը կատարուի երկուշաբթի, ընտանեկան շրջանում և պէտք է տնային բնաւորութիւն ունենայ։

ՊԷՍՏ.—Տիսան պատգամաւորների ժողովում յայտարարեց, որ ունգարացիներն Պարիզի աշխարհահանդէսին մասնակցելու մասին խօսած ճառի մէջ միտք չէ ունեցել Ֆրանսիային վիրաւորելու, քանի որ Ունգարիան ցանկանում է նրա հետ հաշտ և խաղաղ ապրել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Այսօր Բերլին ուղևորեց մեծ իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը։

Ֆրիդրիխ կայսրի թաղման օրը Բերլինի և Պետերբուրգի բօրսաները պէտք է փակ լինին։

ԲԵՐԼԻՆ.—«Armieverordnungsblatt»-ում հրատարակուած է Վիլհէլմ II կայսրի՝ բանակին տուած հրամանը, որի մէջ կայսրը յիշելով զօրքի անսահման հաւատարմութեան մասին դէպի իր առաջնորդը-թագաւորը և յայտարարելով, որ պիտի հետևի իր փառաւոր պապին և թանկագին հօրը, ասում է. «Այսպէսով ես և բանակը պատկանում ենք միմեանց, միմեանց համար ենք ծնուել. մենք անբաժան միմեանց հետ կը լինենք խաղաղութեան և պատերազմի ժամանակ։ Պատերազմական նաւատորմղին տուած հրամանագրի մէջ կայսրը յայտարարում է. «Նաւատորմղին յայտնի է, որ ես խիստ ուրախ եմ ոչ միայն նրա համար, որ արտաքուստ պատկանում եմ նաւատորմին, այլ որովհետև ինձ, ամենավաղ մանկական հասակից, ինչպէս և իմ եղբօր պրինց Հէյնրիխին, նաւատորմղի հետ միացնում է վառ զգացմունքներ։

Այսօր առաւօտը երթևեկնում են Բերլինի տեղապահ զօրքերին։ Առաւտեան ժամը 4-ին զօրքի առանձին բաժինները ներկայանում են կայսերական պալատին իրենց դրօշակներով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 Յունիսի.—Թագաւոր Կայսրը Բարձրագոյնս հրամայել հաճեցաւ՝—Բարձրագոյն պալատում չորս շաբաթ սուգ նշանակել գերմանական կայսրի մահուան առթիւ։

«Journ. de St.-Pétersbourg»-ը «Köln. Zeit.»-ի հաղորդած լուրի առթիւ, թէ գերմանական նոր կայսրի մանիֆէստը պիտի ուշանայ, անկասկած է համարում, որ Գերմանիայի արտաքին քաղաքականութիւնը նոյն ուղղութեամբ կը շարունակուի, ինչպէս էր Վիլհէլմ I և Ֆրիդրիխ III կայսրների օրով և յոյս ունի, որ այդ կայսրներից առաջինի՝ մահուան մօտերքն արտասանած նշանաւոր խօսքերը, նրա օգուտապուռ թոռան համար սրբազան կտակ և առաջնորդող թել լինի Գերմանիայի դէպի Ռուսիան ունենալու յարաբերութեան մէջ։ Ամեն բան էլ մատնել է տալիս, որ այդ յարաբերութիւնները կարող են միայն լաւանալ և հաստատուել այն խորը և համակրական վշտակցութեան պատճառով, որով ռուս հասարակութեան բոլոր դասակարգներն, և ռուս հասարակութիւնը միշտ վերաբերուել են դէպի Հարևան ազգի և արքայական տան կրած վիշտերը։

ԲԵՐԼԻՆ.—Ֆրիդրիխ կայսրի մարմնի անգամահատութեան միջոցին երևացել է, որ Հանգուցեալը ճշմարիտ որ միակ Հիւանդութիւնն է ունեցել։

ՎԵՆՆԱ.—Կ. Պօլսից ստացուած լուրերին նայելով, անցեալ երկուշաբթի, քայրամի տօնի առթիւ սուլթանը մզկիթ գնալու միջոցին, արաբական գնդի մի զինուոր վիրաւորեց ալբանակ մի գնդի զինուորի։ Միւս օրն ալբանական ամբողջ գունդը զօրանոցից դուրս եկաւ, բանակեց Ելդզ-Քեօսկի մօտերքը, և պատերազմական կարգով շարժուեց Հարևան արաբական գունդի զօրանոցի դէմ։ Զօրանոցին մօտենալով, ալբանցիները սկսան հրացան արձակել, արաբները պատասխանեցին, որի միջոցին սպանուեցան 6 հոգի և վիրաւորուեցան 30 հոգի։ Վրայ հասնող միւս գունդերը դադարեցրին հրաձգութիւնը. երկու գունդերի զօրանոցներն էլ շրջապատեցին զօրքով. ալբանական զինուորներից խլեցին զէնքերը և նրանց պատժեցին. նրանց հրամանատար Իզմայիլ-փաշային արքունի շոգենաւ նստեցնելով աքսոր ուղարկեցին. Ֆէցան-Իզմայելակի-փաշան՝ Ելդզ-Քեօսկի բերդակալը հրաժարեցրած է պաշտօնից։

ԲԵՐԼԻՆ, 6 յունիսի. — Մեծ իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը երեկոյեան ժամը 9-ին ժամանեց տեղս։

Լրագիրներում հաղորդվում է, որ գոկաօր Մաքէնզին, Վիլհէլմ II կայսրի կարգադրութեամբ, հաշիւ է ներկայացրել Ֆրիդրիխ կայսրի հիւանդութեան ընթացքի մասին։ Այդ հաշուի մէջ յայտարարվում է, որ հիւանդութեան էութիւնն այժմ որդէն ոչինչ կասկածի չէ ենթարկվում, կայսրը շընչափողի ջուկ ունէր, բայց հիւանդութիւնն ճանաչելու գործը խիստ դժուարացնում էր այն հանգամանքը, որ շնչափողի կրճկրճուկին հենց հիւանդութեան սկզբում դիպել չեն և հիւանդական գործողութիւնը կատարվում էր շնչափողի կրճկրճուկային գործուածքի ամենախորին մասերում, որ խիստ բարդ ձև էր տալիս հիւանդութեան և դժուարացնում էր հիւանդութեան ճիշդ որոշելը։

ՊԱՐԻԶ.—Շարանտի դեպարտամենտում պատգամաւորների ժողովի համար պատգամաւորներ ընտրելու միջոցին բօնապարտական Թէլլիբերը ստացաւ 31,040 ձայն, հասարակապետական Վէյլէին՝ 23,989 ձայն և բուլանժական կանդիդատ Դէրուլէդը՝ 20,656 ձայն։ Կրկնաքուէարկութիւն պիտի լինի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

3 Յունիսի։

Լօնդօն 114, ը., 113,25 ը., 114 ը.	
Համբուրգ 56, 55,90, ը.	
Պարիզ 45 ը., 44,95 ը.,	
Պօլուխմպերթալ .	9 ը. 08 կ. սակ.
Մաքս. կուպօն	182 ը. 50 կ. սակ.
Ադծախ	1 ը. 39 կ. սակ.
Բօրսային պրս.	6⅛ և 7¼%
Պետակ. բանկի	5% տոմս.
1-ին շրջանի. .	99 ը. 12 կ. սակ.
2-րդ	98 ը. 25 կ. գն.
3-րդ	98 ը. 50 կ. գն.
4-րդ	98 ը. 50 կ. գն.
5-րդ	98 ը. 25 կ. գն.
6-րդ	—
Վերջին 4% .	82 ը. 50 կ. սակ.

փոխառութիւնը

100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր,

1-ին շրջանի .	100 ը. — կ. սակ.
2-րդ	98 ը. 62 կ. գն.
3-րդ	98 ը. 62 կ. գն.
Առաջին 5% նեղքին փոխառութեան տոմսեր . . .	273 ը. 75 կ. սակ.
2-րդ	243 ը. 75 կ. սակ.
5½% ըչնտեր .	100 ը. 50 կ. գն.
Ոսկէ ըչնտ . .	194 ը. 50 կ. գն.

Թիֆ. քաղ. վարկի ընկեր.

օրլոգ. . . .

Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Գերմանական կայսրի մահուան պատճառով բօրսան փակուած է մինչև երկուշաբթի։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Կ. Պ ո լ ի ս.—Ասիական ընկեր. խորհուրդին։ «Նոր-Դար»-ի համարները յունիսի 1-ից ուղարկվում են Ձեզ, բայց Դուք մոռացել էք Ֆրանսերէն լեզուով գրելու ընկերութեան հասցէն։ Ձերդ հասցէն չգիտնալով կարող են համարները չհասնել նշանակուած տեղը։ Թէրքիայից խմբագրութեանս մի որ և է գործի համար երբ նամակ են գրում անհրաժեշտ է, որ նամակագիրը հարկաւոր հասցէն Փերանսերէն գրէ, մի բան՝ որ մոռանում են սովորաբար։

—

Մ ե ր վ. Ա. Ց. Մ.-ին.—Անցեալ անգամ Ձեզ պատասխանելով յայտնել էինք, որ Թիֆլիսում մեզ յայտնի չէ Աշտակ Միհէրթեանի գրավաճառանոց։ Այդ պատասխանի վրայ խմբագրատուն մտաւ մի պարոն և յայտնեց, որ ինքն է Ա. Մեհ.—ը և Թիֆլ. գրավաճառանոց չունի, բայց կիրակի օրերը, բազարում գրքեր է վաճառում, իսկ չորս ըուբլի չէ ստացել Ձեզանից, իսկ Այժմ Շուլավէրից մի ուրիշ պարոն՝ Ա. Մեհ., յայտնում է, որ ստացել է չորս ըուբլին և Ձեր ցանկացած գրքերը շուտով կուղարկէ Ձեզ Թիֆլիս գալով, եթէ մինչև օրս ուշացրել է, դրա պատճառն այն է, որ նա փող ստացել է 3-4 ամիս յետոյ՝ Թիֆլիսում չգտնուելու պատճառով, որովհետև բնակվում է Շուլավէրում։

—

Կ. Պ ո լ ի ս.—Գ-ին։ Ձեր ընդարձակ Թղթակցութիւնները ստացանք և առանձին ուշադրութեամբ կարդացուեցաւ խմբագրական ժողովում։ Շատ, շատ լաւ են, բայց չեն հրատարակուիլ։ Գրեցէք միւս նամակների և, ինչպէս խոստանում էք, այդտեղի մասին վրայ։

—

Մ ե ր վ, Մ-ին.—Ձեր Թղթակցութիւնները մինչև օրս չեն հրատարակուել, որովհետև նախ՝ նրանք շատ կան, որ սպասում են հերթի, երկրորդ՝ երկար են։ Համբերեցէք։ Շնորհակալութիւն։

—

Կ. Պ ո լ ի ս.—***-ին։ Ինչու էք տաքացել. ինչու էք զարմանում, որ Բաֆֆիի մահուան առթիւ Կ. Պոլսի մամուլի պահպանած լռութեանը—Ձեր անուանած մարդիկ, բայց դրանք քիչ են հասկանում. դրանց հարկաւոր էր Բաֆֆիի անունով թոզ փչել և փչեցին։

Խմբագիր-հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկու ուսուցիչներ պատրաստում են գիմնազիայի և Ներսիսեան դպրոցի մինչի երկրորդ դասարանի աշակերտներ։

Հասցէն իմանալ «Նոր-Դար»-ի խմբագրատանը

3—1

Լոյս տեսաւ մամուլի տակից

„ՄՏԱՄՈՒՐ ԹՓՓԱՐԱԿԱՆ"

ԿԱՄ

„ԹՇՈՒԱՌ ՁԱՆԱՊԱՐՀՈՐԴ"

վերնագրով գրքոյկը բաղկացած

120 երեսից

ԳԻՆՆ Է 25 կոպ.

Վաճառվում է «Կենդրոնական» գրավաճառանոցում։

6—4

Բաթումից գնում է Փոթի

Զ օ ր ե ք շ ա բ ա թ ի և կ ի ր ա կ ի օ ր ը ը ը.—Նաւի դուրս գնալու ժամը որոշում է Բաթումի նաւային գործակալութիւնը՝ նաւը Փոթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ Օ դ ե ս ս ա յ ից Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստներից գալիս են Փոթի որոշեալ ժամանակներում երթևեկող ապրանքակիր-մարդակիր նաւեր չ ո ր ե ք շ ա բ ա թ ի օրերը, լուսաբացին, և գնում են ու ր բ ա թ առաւօտները։ Ն ի կ ո լ ա ե վ ից Օդեսայի վրայով շ ա բ ա թ օրերը երեկոյեան Ս ե վ ա ս տ օ պ օ լ և Բ ա թ ո ւ մ գալիս են նոյնպիսի նաւեր, որոնք Փոթի գալիս են ու ր բ ա թ լուսաբացին և հեռանում է շ ա բ ա թ օրը երեկոյեան, վերադառնում է առանց Բաթում մտնելու Ս ե վ ա ս տ օ պ օ լ ի և Օ դ ե ս ս ա յ ի վրայով գալիս է չ ո ր ե ք շ ա բ ա թ ե յեան։

—

ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

երթևեկութիւնը պատերազմական-վիրաբան ճանապարհով

1888 թ. մայիսի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը։

Թ ի ֆ լ ի ս ից դուրս է գալիս

Հ ի ն գ հ ո գ ու տեղ ունեցող կ ա ր է տ ը առաւօտեան ժամը 9-ին, Մէյթի կայարանում գիշերելով. հասնում է Վլադիկավկազ միւս օրը երեկոյեան ժամը 8-ին։

Նոյնպէս դուրս է գալիս առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Գուդաուր կայարանում և Վլադիկավկազ հասնելով միւս օրը ցերեկուայ ժամը 5-ին։

Վ ե ց հ ո գ ու տեղ ունեցող օ մ ն ի բ ու ս ը դուրս է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց գիշերելու, միւս օրը, երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկավկազ։

Նոյնպէս դուրս է գալիս Ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու Վլադիկավկազ հասնում է միւս օրը ժամը 8-ին երեկոյեան։

Վ լ ա դ ի կ ա վ կ ա զ ից

Հ ի ն գ հ ո գ ու տեղ ունեցող կ ա ր է տ ը դուրս են գալիս առաւօտ. ժամը 9-ին, գիշերում են Մէյթի կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս առաւօտեան ժամը 7-ին դուրս են գալիս և գիշերելով Պատնաւը կայարանում, միւս օրը ժամը 6-ին երեկոյեան հասնում են Թիֆլիս։

Վ ե ց հ ո գ ու տեղ ունեցող օ մ ն ի բ ու ս ը դուրս են գալիս ցերեկուայ ժամը 4-ին Ճաշից յետոյ, առանց գիշերելու՝ միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս դուրս են գալիս երեկոյեան ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու, միւս օրը հասնում են Թիֆլիս երեկոյեան ժամը 9-ից 50 ը. անց։

ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ

Խարկովի համալսարանի բժշկապետ Ա. Շլեթեանը այս ամառ մտադիր է ընդունել հիւանդներին Մայիսի 30-ից մինչև Օգոստոսի 30-ը։ Հասցէն, Վերին Բոլվար, Քանեվսքու-տանը (Верхній бульваръ, домъ Каневскаго);

4—4

ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Շոգենաւային երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի մէջ։

—

Բաթումից գնում է

Ե ր ե ք շ ա բ ա թ ի ն ե ր ը ը.—Կէս օրից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով, մրնում է Սուխումի և Նովոռոսսիյսկի նաւահանգիստները։

Հ ի ն գ շ ա բ ա թ ի ն ե ր ը ը.—Կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովոռոսիյսկի և կերչի վրայով։

Շ ա բ ա թ օ ր ե ր ը ը.—Երեկոյեան 8 ժամերին, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով։

Ե ր կ ո ւ շ ա բ ա թ ի ն ե ր ը ը.—Երեկոյեան արտասահմանեան գնացքով Կ. Պոլիս։

Բաթումի գալիս է

Ե ր կ ո ւ շ ա բ ա թ ի — Առաւօտը, Օդեսայից, ուղիղ գծով՝ կերչի և Սուխումի վրայով։

Չ ո ր ե ք շ ա բ ա թ ի — Առաւօտը Օդեսայից, ուղիղ գծով, կերչի և Նովոռոսսիյսկի վրայով։

Ու ր բ ա թ. — Երեկոյեան, Օդեսայից, շրջանառու ընթացքով։

Կ ի ր ա կ ի օ ր ե ր ը ը.—Առաւօտը Կ. Պոլսից։

Մ ա ն օ թ.—Ուղիղ գծով ընթացքը այն նաւերը, որոնք վերադառնում են կերչի և Նովոռոսսիյսկի վրայով, Նովոռոսսիյսկից պիտի դուրս գան երեկոյեան ժամը 9-ին, Նովոռոսսիյսկեան երկաթուղու գնացքին յարմարելու համար։

Փոթիից գնում է Բաթում

Ե ր ե ք շ ա բ ա թ ի ն ե ր ը ը. — Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ շոգենաւին մնանալու, որ մտնում է և Սուխում։

Ու ր բ ա թ—երեկոյեան կամ գիշերը, շրջանառու Ղրիմ-Կովկասեան Բաթում գնալու նաւը նաւահանգիստ գալուց յետոյ։

Շ ա բ ա թ օ ր ե ր ը ը. — Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Բումիլեա-Անատոլեան շրջանառու շոգենաւերին մնանալու։

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի հոգաբարձական խորհրդարանում յունիս ամսոյս 15-ն, երեկոյեան 8 ժամին, լինելու է երկրորդ անգամ աճուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու 21 կրպակները, որք գտանվում են դպրոցապատկան հրապարակի վրայ Վանայ եկեղեցւոյ մօտ։ Պայմանաժամադրքը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից ու տօներից, առաւօտեան 10—ց12 ժամն։

Հոգաբարձու Բ. Մելիք Ղարագեօզեանց։

Գործավար Բ. Հ. Ջալալեանց։

3—1

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէլլի և Բաթումի մէջ։

Հ ի ն գ շ ա բ ա թ ի, յունիսի 9-ին, «ԱՆԱՏՕԼԻԱ» (Anatolie) շոգենաւը, նաւապետ «ԲՕՇԵԼ» (Boschel) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէլլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԳՈՒԲԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԻՆՕԻՆ, նախկին գալերէյա Աբծրունիների № 103. 4—4

Дозволено цензурою. Тифлисъ, 6-го Іюня 1888 г.

Տպարան Լ. Գ. Կրամարէնկօյի

Типографія Л. Г. Кramаренко, Гол. пр., д. Читахова